

Քրիստոնեայ – Իսլամ Երկխոսութիւն

Սուրիոյ քաղաքական տագնապալից վիճակները նկատի առած, Հալէպի Նահանգապետի հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ տեղի ունեցաւ հրապարակային դասախօսութիւն, Հինգշաբթի 27 Փետրուար 2014-ին, կէսօր ժամը՝ 12:00-ին, Սուրիոյ արուեստագէտներու Ընկերակցութեան Սրահէն ներս: Մոյն դասախօսութեան գրուցավարներն էին՝ Դոկտ. Մահմուտ Աքքամ (Հալէպի Մուֆթի) եւ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան (Համայնքապետ՝ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի): Դասախօսութեան հիմնական նպատակն էր գտնել վաւերական եւ գործնական լուծումներ, մինչ կը գտնուինք մարտահրաւերներու դիմաց փոխադարձ գոյակցութեան կապակցաբար Սուրիոյ կրօնական համայնքներու միջեւ:



